**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1.1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՔԿ-ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/10

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված «Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի» կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ 12.09.2025թ. ստացված հարցադրման և դրա վերաբերյալ 12.09.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

**Հարցում**

Ջրամատակարաման և ջրահեռացման լիցենզիա

Բարև Ձեզ՝

Հայտարարության մեջ նշված է՝

2.2.1 Մասնակիցը պետք է ունենա հրավերով նախատեսված աշխատանքի կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն («Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 1-ին դասի լիցենզիա և հետևյալ ներդիրները)՝

1) բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (1-ին դաս)

2) էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) (1-ին դաս)

3) ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) (1-ին դաս)

4) ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) (1-ին դաս)

ներքի և բակային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի համար մեր կազմակերպությունը ունի 2-րդ դասի լիցենզիա:
Անհրաժեշտ է ենթակապալի պայմանագիր ներկայացնել թե ոչ:

**Պարզաբանում**

Հրավերով հստակ սահմանված են լիցենզիաի պահանջները և հայտը կարող եք ներկայացնել միայն կոնսորցիումով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Գ. Հակոբյանին:

Հեռախոս՝ 011 621-821:
Էլ. փոստ՝ tender5@minurban.am
ՀՀՔԿ-ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով